«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 38/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 06.12.2018թ. ժամը 16:00

10.10.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի հոկտեմբերի 15-ին ՀՀ վարչապետի աշխատակազմից թիվ 21/21.10/34650-18 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 30.10.2018թ-ին ստացված Գոռ Սարիբեկյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, Ա/Ձ Աշոտ Սարիբեկյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աշոտ Խաչատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի դեկտեմբերի 06-ին, ժամը 16:00-ին հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու `Գոռ Սարիբեկյանի ներկայացուցիչ Տիգրան Նաղդալյանը
Ա/Ձ Աշոտ Սարիբեկյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աշոտ Խաչատրյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Ա/Ձ Աշոտ Սարիբեկյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աշոտ Խաչատրյանը և Գոռ Սարիբեկյանի ներկայացուցիչ Տիգրան Նաղդալյանը պատշաճ ծանուցվել էին նիստի մասին, սակայն նիստին չէին ներկայացել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1.10.10.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի հոկտեմբերի 15-ին ՀՀ վարչապետի աշխատակազմից թիվ 21/21.10/34650-18 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 30.10.2018թ-ին ստացված Գոռ Սարիբեկյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, Ա/Ձ Աշոտ Սարիբեկյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աշոտ Խաչատրյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.4-րդ կետի համաձայն, հանձնաժողովի նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված սնանկության գործով կառավրչի և/կամ այլ անձնաց բացակայությունը արգելք չէ կառավարչի

նկատմամբ հարուցված կարգապահական խախտման քննարկման համար և առաջարկեց նիստը շարունակել առանց կողմերի, քանի որ նրանց պատշաճ ծանուցումը ապահովված է եղել:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հակիրճ ներկայացրեց բողոքի բովանդակության սնանկության գործով կառավարչին վերաբերվող մասերը:Ըստ էության բողոքում նշվել է, որ սնանկ ճանաչելու վերաբերյալ վճռի հրապարակումից հետո ամիսներ անց, 09.09.2016թ-ի ԱՐԴ/0017/04/16 սնանկության գործով Աշոտ Խաչատրյանը «խախտելով» «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 56-րդ հոդվածները և ելնելով այն փաստից,որ դատարանը իր դատական ակտով՝ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը համաձայն պայմանագրի համարել է որպես գրավի առարկա,իսկ սնանկության գործով կառավարիչը ներառել է սնանկ ճանաչվածի գույքի ցանկ, այնինչ 47-րդ հոդվածը սահմանում է,որ երրորդ անձի գույքը չի ներառվում սնանկ ճանաչվածի գույքի կազմում:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը առաջարկեց կարճել Ա/Ձ Աշոտ Սարիբեկյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աշոտ Խաչատրյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Գոռ Սարիբեկյանի դիմումի մասով, քանի որ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի լիազորություններից դուրս է վերանայել դատարանի կողմից կայացված դատական ակտը կամ քննարկել դատական ակտերի օրինական լինելու հարցը: Այս պարագայում կառավարիչը գործել է օրենքի շրջանակներում, դատարանի որոշումների հիման վրա և պարտավոր էր կատարել դատական ակտերը:
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը, սակայն նշեց, որ սնանկության գործով կառավրիչը խախտել է «Սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագիրք»-ը, որի 7.8-րդ կետը սահմանում է, որ կառավարիչը իր գործունեությունը իրականացնելիս պարտավոր է պահպանել ՀՀ օրենսդրությամբ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքով, կանոնադրությամբ, սույն Կանոնագրքով և Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով սահմանված բոլոր պահանջները: «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 3.4-րդ կետի համաձայն, կառավարիչը, ում նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, պարտավոր է հանձնաժողովի պահանջով ներկայացնել գրավոր բացատրություններ, ինչը կառավարչի կողմից չի կատարվել: Բացի այդ կառավարիչը որևէ կերպ կապ չի հաստատել հանձնաժողովի հետ և կարծիք չի հայտնել հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ:Կարգապահական հանձնաժողովի նախագահն արտահայտեց այն կարծիքը, որ Աշոտ Խաչատրյանի վարքագիծը՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ լիազոր մարմիններին, «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովին պարզաբանումներ չտալը կամ չհամագործակցելը խաթարում է «ՍԳԿԿ» ԻԿԿ գործունեությունը և ընդհանուր շահերը և վտանգում է կազմակերպության անդամների հետագա առողջ և հարգալից փոխհարաբերությունները:
«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի նախագահը առաջարկեց վերանշյալ նկատառումներից ելնելով, «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5-րդ հոդվածի 5.1 հիմքով որպես կարգապահական տույժ՝հայտարարել հրապարակային նկատողություն, քանի որ սնանկության գործով կառավարչի կողմից թույլ է տրվել խախտում հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. 10.10.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի հոկտեմբերի 15-ին ՀՀ վարչապետի աշխատակազմից թիվ 21/21.10/34650-18 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 30.10.2018թ-ին ստացված Գոռ Սարիբեկյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, Ա/Ձ Աշոտ Սարիբեկյանի սնանկության գործով կառավարիչ՝ Աշոտ Խաչատրյանի գործողությունները/անգործություն/, օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 հիմքով հայտարարել հրապարակային նկատողություն, իսկ դիմումատուի բերած բողոքի մասով կարճել, քանի որ սնանկության գործով կառավարիչը իրականացրել է իր գործառույթները «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ, 55-րդ հոդվածներին համապատասխան:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան